



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝
Բերդ համայնքի ղեկավար _____ Աստղիկ Հակոբյան
Հաստատվել է՝
Բերդ համայնքի ավագանու 2024թ. Ամիս, ամսաթիվ-ի N -Ա որոշմամբ

ք.Բերդ 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն և զարգացման խոչնդոտների վերլուծություն	3
2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ	4
2.1 Տեղական ինքնակառավարման մարմիններ և համայնքապետարան	6
2.2 Իրավաչափ վարչարարության ապահովում	7
2.3 Համայնքային գույքի հաշվառում և կառավարում	7
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ	8
3.1.1 Քաղաքաշինություն	8
3.1.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն	12
3.1.3 Գյուղատնտեսություն	12
3.1.4 Արտաքին լուսավորություն	13
3.1.5 Տրանսպորտ և ճանապարհային տնտեսություն	13
3.1.6 Կրթության, Մշակույթի, Սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	14
3.1.7 Առևտուր և սպասարկում	14
3.1.8 Արտաքին կապերի և տուրիզմի	15
3.1.9 Առողջապահական հաստատություններ	16
3.2 Հանրապետական և մարզային ծրագրեր	16
3.3 Միջհամայնքային ծրագրեր	16
3.4 Այլ ծրագրեր և միջոցառումներ	16
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատում և կանխատեսում	17
5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՄ) վերլուծություն	18
6. ՀԶԾ հեռահար նպատակի, միջանկյալ արդյունքների և նպատակների հասնելու համար անհրաժեշտ գործողությունների սահմանում	19
6.1 Համայնքի զարգացման ծրագրի հիմնական նպատակները	20
6.2 Բերդ համայնքի զարգացման 2023-2027 թթ գործողությունների սահմանում	20
6.3 Համայնքի զբոսաշրջային ռեսուրսներն ու ներուժը	21
7. Գործողությունների սահմանում և ռեսուրսների հաշվարկ	24
8. ՀԶԾ միջոցառումների նկարագրության կազմում	29
8.1 ՀԶԾ վերաբերյալ իրազեկում	27
8.2 ՀԶԾ իրականացում	27
8.3 ՀԶԾ մոնիթորինգ	27
8.4 ՀԶԾ գնահատում	29
9. ՀԶԾ տրամաբանական հենքը	31
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել հաջորդ տարիներին Բերդ համայնքի (այսուհետ՝ համայնք) զարգացման գերակա ուղղությունները և նշել դրանց հասնելու հնարավոր ճանապարհներն և անհրաժեշտ միջոցառումները: Գերակա ուղղությունների հստակ սահմանումները հնարավորություն կստեղծեն իրագործել տեղական ինքնակառավարման առաքելությունը և հասնել համայնքի զարգացման տեսլականին: Համայնքի զարգացման գերակա ուղղությունները սահմանելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության մշակման և գերակա ուղղությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ): Գերակա ուղղություններից բխող հիմնխնդիրները սահմանումներ են որոշակի ժամկետում իրականացվող անելիքների մասին: Ամեն տարի համայնքը կարող է մշակել նոր և համայնքի զարգացման գերակա նպատակներին առավել համապատասխան հիմնախնդիրներ և լրացումների ձևով ներառել սույն փաստաթղթում: Այս փաստաթղթում սահմանված հիմնախնդիրները նույնպես համապատասխանում են տվյալ պահին առկա իրավիճակին: Ծրագրի նախագծի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժինները, քննարկվելու և հաշվի են առնվելու հանրային լուրմների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բերդ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հյուսիսային-արևելյան մասում: Համայնքը տեղակայված է Մուրղուզի լեռնաշղթայի Կենաց լեռնաձյուղի վրա՝ Տավուշ գետի հովտում, որը ձգվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Համայնքը արևմտյան տարածքներով սահմանակից է Իջևանին, հարավ-արևմտյան տարածքներով Ճամբարակին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Ադրբեջանին:

Բերդ համայնքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 78528,27 հա: Ռելեֆը բարդ է, գետի լանջերը թեք են, կտրված հեղեղատներով: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը ծովի մակարդակից 934մ: Հանրապետության մայրաքաղաքից հեռու է 202 կմ, մարզկենտրոնից՝ 63,8 կմ: Սահմանամերձ է: Բերդ համայնքն ունի բարեխառն կլիմա, սակավաձյուն է, ոչ սառնամանիքային շրջանը հաշվվում է շուրջ 220 օր:

Բերդն իր անունն ստացել է Տավուշ բերդի անունից և տեղակայված է եղել Տավուշ գետի ձախ ափին: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու կողմից Բերդը հիշատակվում է Ոլորուտ անունով, 1608թ. մի հիշատակարանում՝ Բերդ անվամբ: Հնում այս տարածքը մտել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի մեջ: Բերդի տարածքում գտնվում են մի շարք պատմական հուշարձաններ,

որոնցից առավել նշանավոր են միջնադարյան Հայաստանի ամրոցներից Տավուշ ամրոցը /9-13 դար/, <<Մայրի վանք>>-ը /13-րդ դար/, Կապտավանք/12-րդ դար/, Շխմուրադ/12-13-րդ դար/, Խորանաշատ/13-րդ դար/, Վարազավանք/12-14-րդ դար, Սուրբ Սարգիս եկեղեցին և նրա շուրջը տարածվող գերեզմանոցը, որտեղ պահպանվել են նշանավոր Քիրամ, Խաչատուր վարպետների գեղաքանդակ խաչքարերը:Բերդի տարածաշրջանը հարուստ է բազմաթիվ կիկլոպյան և միջնադարյան ամրոցներով, որոնց թիվը անցնում է 40-ից, և եկեղեցիներով ու մատուռներով, որոնց թիվը հասնում է 100-ի: Արժեքավոր է հատկապես քաղաքի հարավ-արևելյան մասում գտնվող կիկլոպյան ամրոցի մոտակայքում ընկած դամբարանադաշտը /5-4 դար մ.թ.ա./, որտեղից հայտնաբերվել են կավե անոթներ, ապակե ոլունքներ, երկաթե զենքեր, քորոցներ և այլ զարդեր:

Բերդ համայնքի տարածքի շրջակայքը հիմնականում ներկայացված է անտառային լանդշաֆտով: Համայնքը շրջապատող անտառային հողերի մակերեսը կազմում է շուրջ 58,307հազ. հա:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 31479 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 15777 և կանայք՝ 15702, իսկ առկա բնակչության թիվը կազմում է 23264 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 11164 և կանայք՝ 12100: Բնակչության տարիքային և սոցիալական կազմը՝

	Ընդամենը	իգական	արական
1. մինչև 1 տարեկան.....	345	152	193
2. 1-2 տարեկան.....	656	311	345
3. 3-4 տարեկան.....	621	293	328
4. 5-6 տարեկան.....	683	311	372
5. 7-10 տարեկան.....	1485	743	742
6. 11-14 տարեկան.....	1560	774	786
7. 15-17 տարեկան.....	1062	519	543
8. 18-22 տարեկան.....	1647	888	759
9. 23-45 տարեկան.....	11026	5121	5905
10. 46-62 տարեկան.....	7017	3359	3658
11. 63 և ավելի տարեկան.....	5377	3231	2146
	31479	15702	15777
	Ընդամենը	իգական	արական
1. Հաշմանդամներ.....	1735	747	988
որից՝			
1.1. հաշմանդամ երեխա.....	56	23	33
այդ թվում՝			
1.1.1. 0- 5 տարեկան.....	6	3	3
1.1.2. 6-15 տարեկան.....	32	14	18
1.1.3. 16-18 տարեկան.....	18	6	12
2. Միակողմանի ծնողազուրկ երեխա.....	X	x	x
3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա.....	94	x	x

4. Ոստիկանության հսկողության տակ գտնվող երեխա	2	0	2
5.1. այդ թվում՝ հաշմանդամներ.....	0		
6. Կենսաթոշակառու.....	6137	3420	2717
7. Միայնակ չաշխատող կենսաթոշակառու.....	92	x	x
8. Տարեց կենսաթոշակառուներ (75 տարեկան և բարձր)	1784	1224	560

Աղյուսակ 2.1 Բնակչության իրավիճակի բնութագրիչներ

Հ/Հ	Բնութագրիչներ	Ժամանակահատվածը	Թիվը
1	Ծնունդ	01 հունվարի 2023թ	295
2	Մահ	01 հունվարի 2023թ.	208
3	Ամուսնություն	01 հունվարի 2023թ.	98
4	Ամուսնալուծություն	01 հունվարի 2023թ.	23

Աղյուսակ 2.2 Բնակչության զբաղվածությունը

Հ / Հ	Բերդ համայնքում գրանցված գործազուրկների թիվը (մարդ)	01.01.2023թ. դրությամբ		
		Ընդհանուր	իգական	արական
1	Ընդամենը գրանցված գործազուրկներ, որից՝	278	198	80
2	տարրական կրթությամբ	4	1	3
3	միջնակարգ կրթությամբ	119	79	40
4	միջին մասնագիտական կրթությամբ	81	69	12
5	բարձրագույն կրթությամբ	19	17	2

Աղյուսակ 2.3 Կրթության իրավիճակի բնութագրիչներ

Հ/	Համայնքում առկա մշակութային, արվեստի, սպորտի և այլ ուսումնական հաստատությունները.	Հաստատությունների թիվը*	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում ընդգրկվածների/սաների, այցելուների թիվը, մարդ/ամիս
1	Մշակույթի տուն	1	331	1455
2	Նախադպրոցական հաստատություններ	19	198	844
3	Ուսումնական հաստատություններ	22	690	3402
4	Թանգարան	1	2	3100
5	Գրադարան	1	17	500

6	Բնտերնետային կենտրոն/ ակումբ	2	4	
7	Ազատ ժամանակի անցկացման վայրեր /սրճարան, բար, ռեստորան, այլ/	8	31	X
8	Մարզական դպրոց	1	16	298
9	Երաժշտական/արվեստի դպրոց կամ խմբակ	1	15	85
10	Եկեղեցի	3	3	3846
11	Հասարակական կազմակերպություններ	10	32	7000

Աղյուսակ 2.4 Բնակչության և բնակելի ֆոնդի իրավիճակի բնութագրիչներ

Հ/Հ	Բերդ համայնք	Մշտական			Առկա		
		Ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
			Իգգվական	արական		իգգվական	արական
1	բնակչության թվաքանակը, մարդ	31479	15702	15777	23264	12100	11164
2	տնային տնտեսությունների թվաքանակը	8491	X	X	6749	X	X
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	X	X	X	X	X	X
2.2	կիսակառույց տներում բնակվող	0	X	X	0	X	X
3	ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	495	X	X	495	X	X
4	Ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների թվաքանակը	1554	X	X	X	X	X

2.1 Տեղական ինքնակառավարման մարմիններ և համայնքապետարան

Համայնքապետարանն ունի իր պաշտոնական կայքը՝ www.berdcity.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, ՏԻՄ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում համայնքային իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը:

Համայնքի ավագանու անդամների թիվը – 21, համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 7 հայեցողական պաշտոն:

Բերդի համայնքապետարանը իր գործունեությունը ծավալում է թվով , 7 հայեցողական պաշտոնների, 60 համայնքային ծառայողների, 26 պայմանագրային աշխատողների, համայնքում գործող համայնքային ենթակայության թվով 18 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ 340 աշխատատեղով և բյուջետային 4 հիմնարկների՝ 96 աշխատատեղով: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը (հավելված 1):

Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր,
- համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փորձի փոխանակման ծրագրեր,
- թարմացնել համայնքապետարանի կայքը՝ այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ,
- մշակել հ/կ-ների հետ համագործակցության եղանակներ՝ նրանց մտավոր ու նյութական միջոցները նպատակաուղղել համայնքի զարգացմանը:

2.2 Իրավաչափ վարչարարության ապահովում

Հանրային իրավահարաբերությունների ոլորտում համայնքի կողմից իրականացվող վարչարարությունը՝ ներառյալ քաղաքացիներին և իրավաբանական անձանց իրավունքների տրամադրման, փոփոխման, դադարման կամ վարչական պատասխանատվության դեպքերը կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերով, քաղաքացիների դիմումները, որոնց արդյունքում պարտադիր անհրաժեշտ է հարուցել վարչական վարույթ և լուծման ընթացակարգ: Նշված օրենքի պահանջները քննարկվել է «Քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում:

Հիմնախնդիրներ

- Կարևորել տեղական ինքնակառավարման մարմնի դերը՝ որպես վարչական մարմնի:
- Պահպանել քաղաքացիների և իրավաբանական անձանց օրենքով սահմանված իրավունքները վարչական մարմնի հետ իրավահարաբերություններում:
- Համայնքապետարան մուտքագրված յուրաքանչյուր դիմումի հիման վրա, եթե դրանով հայցվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում որևէ իրավունքի տրամադրում, փոփոխում կամ դադարում, հարուցել վարչական վարույթ:
- Դիմումատուի մասնակցությամբ իրականացնել լուծումներ և կայացնել իրավաչափ վարչական ակտ:
- Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերի քննությունը իրականացնել զանցանք կատարողի մասնակցությամբ՝ պահպանելով օրենքի բոլոր նորմերը:

2.3 Համայնքային գույքի հաշվառում և կառավարում

Մինչև օրս Բերդ համայնքի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի (շենք-շինությունների) տնօրինման, վարձակալության տրամադրման, օտարման գործընթացով առանձին-առանձին զբաղվել են համայնքապետարանի մի քանի մասնագետներ: Համայնքային գույքի կառավարման միասնական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով 2022 թվականի դեկտեմբերից Բերդի համայնքի ղեկավարի կարգադրությամբ իրականացվել է համայնքապետական՝ ներառյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, նյութական և ոչ նյութական ակտիվների ամբողջական գույքագրում:

Հիմնախնդիրներ

- Համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, ոչ նյութական ակտիվների, անշարժ և շարժական գույքի համատարած և ամբողջական գույքագրում, դրանց հաշվառման համակարգի կատարելագործում: Համայնքային գույքի, օբյեկտների խմբավորում և դասակարգում, դրանց պահպանման և օգտագործման գործընթացի կանոնակարգում և վերահսկում:

- Բերդի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված ֆիզիկական մաշվածության ենթարկված գույքերի նկատմամբ, որոնք պահանջում են լրացուցիչ չհիմնավորված ծախսեր, իրականացնել առաջնահերթ օտարման գործընթաց:
- Գույքի հաշվառման համակարգի կատարելագործում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.1 Համայնքի տարածքում նախատեսվող

3.1.1 Քաղաքաշինություն

Բերդ համայնքում գտնվող 52 բազմաբնակարան շենքերի կառավարումը իրականացվում է <<Բերդի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի կողմից, քանի որ համայնքում չկան համատիրություններ: Համայնքի բնակֆոնդը կազմում է 983318 քմ մակերես, որն ամբողջովին սեփականաշնորհված է: Բազմաբնակարան շենքերից ակնառու տեղադրությամբ 8-ը վթարային են և ունեն 3-րդ, 4-րդ կարգի վթարայնության աստիճան: Կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքեր համայնքում չկան: Միայն մեկ բազմաբնակարան շենքում է տեղադրված վերելակներ՝ 3, որոնք 2014 թվականին վերանորոգվել և հանձնվել են շահագործման: Բազմաբնակարան շենքերի ոչ բնակելի տարածքներից 2100 քմ վարձակալությամբ տրամադրվել է բնակիչներին: Համայնքում առանձնատների թիվը հասնում է 8838-ի, որից 150-ը վթարային են, 70-ը՝ կիսակառույց: Համայնքում հաշվվում են 280 ավտոտնակներ, 5720 քմ մակերեսով:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Բերդ համայնքում

- Լևոն Բեկի 10 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնովին վերանորոգում:
- Լևոն Բեկի 10 հասցեում գտնվող վարչական շենքի հարևանությամբ հասարակական սանհանգույցի կառուցում:
- Կապիտալ վերանորոգման կարիք ունեցող շենքերի ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում:
- Համատիրության ստեղծում:
- Բակերի բարեկարգում և կանաչապատում, նոր նստարանների տեղադրում:
- Համայնքի տարածքում գտնվող կառույցներում հաշմանդամների համար թեքուղիների կառուցում:
- Վերանորոգվելու են Բերդ քաղաքի Մաշտոցի պողոտայի մանկական այգին:
- Մասնակի սալիկապատման, հենապատերի ամրացման և ջրահեռացման աշխատանքներ է իրականացվելու Նորավան-Վարդանանց ճանապարհահատվածում:
- Կառուցվելու է „Հերոսների պուրակ,, և բարեկարգվելու են հարակից տարածքները:
- Նոր մեքենասարքավորումներ են ձեռք բերվելու կոմունալ տնտեսության սպասարկման համար:
- Սալիկապատվելու է Այգեստան-Տերյան-Թումանյան ճանապարհահատվածը:
- Սալիկապատման և ջրահեռացման համակարգ է կառուցվելու Խորենացի փողոցից մինչև Մաշտոց փողոցի հատվածներում:
- Սալիկապատվելու և ջրահեռացման համակարգ է կառուցվելու Մաշտոցի 21,22,24 շենքերի բակերում
- Սալիկապատվելու է 3-րդ դպրոց տանող ճանապարհի Մաշտոցի պողոտային հարող հատվածը

- Կառուցվելու է Նժդեհի փողոցից դեպի Սորաններ տուրիստական քայլուղի
- Կառուցվելու է 15 կմ նոր լուսավորության համակարգ
- Կանաչապատվելու է Մաշտոցի պողոտայի մայթերի հարակից հատվածը
- Հիմնանորոգվելու է Մաշտոց փողոցի ջրահեռացման համակարգը:
- Սալիկապատման և ջրահեռացման համակարգ է կառուցվելու Հայկ Նահապետի փողոցից դեպի Սայաթ-Նովա փողոցի հատվածում:
- Սալիկապատման, կանաչապատման, լուսավորության ինչպես նաև ջրահեռացման համակարգի և կամրջի վերանորոգման աշխատանքներ են իրականացվելու Եղիշեի փողոցից դեպի շուկա տանող հատվածում:
- Ասֆալտապատվելու և ջրահեռացման համակարգ է կառուցվելու Սարալանջի փողոցում:
- Փողոցային լուսավորության ցանց է անցկացվելու Տավուշ գյուղից դեպի Բերդ քաղաք տանող հատվածում:
- Բերդ քաղաքի երկրորդային ճանապարհների լուսավորության համակարգը փոխարինվելու է նոր լեդ համակարգով:
- Գազաֆիկացվելու է Նալբանդյան փողոցը:
- Հիմնանորոգվելու են հանրային տրանսպորտի կանգառները, թարմացվելու են ճանապարհային նշաններն ու փողոցների անվանական ցուցանակները:
- Ընթացիկ վերանորոգման են ենթարկվելու քաղաքի հենապատերը:
- Այգիներում և բակերում կառուցվելու են նոր խաղահրապարակներ, տեղադրվելու են նստարաններ, համալրվելու են հանրային օգտագործման մարզահրապարակները:
- Ընդլայնվելու և ընթացիկ բարեկարգվելու են կոյուղու ցանցերը:
- Կառուցվելու է նոր աղբավայր:
- Համալրվելու են թաքստոցների և ապաստարանների գույքային ֆոնդերը:
- Հարմարավետ թեքահարթակներով կանգառների կառուցում:
- Մարզադպրոցի հիմնովին վերանորոգում:
- Ֆուտբոլի դաշտի վերակառուցում:
- Հասարակական տրանսպորտային ցանցի սպասարկման համար մեքենասարքավորումների ձեռք բերում

Արժվաբերում

- Բարեկարգվելու են երկրորդային ճանապարհները
- Կառուցվելու է թաղամասային կոյուղի
- Կառուցվելու են անհրաժեշտ հենապատեր
- Կառուցվելու է թաղամասային լուսավորության համակարգ
- Վերանորոգվելու են սպորտային դահլիճը և պատուհանները
- Կապիտալ վերանորոգվելու է գյուղը սնուցող արտաքին ջրատարը
- Ասֆալտապատվելու է Արժվաբերդ – Չորաթան ճանապարհը
- Գազաֆիկացվելու են հացատները

Այգեձորում

- Հիմնանորոգվելու է մշակույթի տունը
- Վերանորոգվելու և կահավորվելու է գյուղապետարանի շենքը
- Կառուցվելու է սպորտդպրոց
- Վերակառուցվելու է առողջության կենտրոնի շենքը
- Համալրվելու է գյուղատնտեսական տեխնիկան

Պատավաքարում

- Կառուցվելու է ջրագիծ
- Տեղադրվելու է պոմպակայան և կառուցվելու է ոռոգման ներքին ցանց
- Կառուցվելու է ոռոգման ջրի ջրամբար
- Կառուցվելու է կոյուղու ցանց
- Կապիտալ վերանորոգվելու են ներքին ճանապարհները
- Բեջանի ձորի կամրջի վերանորոգում, աստիճանավանդակի վերակառուցում

Վերին Կարմիրաղբյուրում

- Կառուցվելու է Վերին Կարմիրաղբյուր-Միափոր խմելու ջրագիծը
- Սալիկապատվելու կամ ասֆալտապատվելու են ներբնակավայրային 1,5 կմ ճանապարհահատվածը
- Հին մանկապարտեզի շենքի տարածքում կառուցվելու է հանդիսությունների սրահ
- Վերանորոգվելու է մշակույթի տան դահլիճը

Սովսեսում

- Խճապատվելու են ներբնակավայրային ճանապարհները
- Անցկացվելու է փողոցների ցերեկային լուսավորություն
- Բարեկարգվելու են խմելու ջրի ակունքները
- Կառուցվելու են գլխավոր ճանապարհի հենապատերը
- Կառուցվելու է ջրամատակարարման ցանցը
- Բարեկարգվելու են հանդամիջյան ճանապարհները
- Վերանորոգվելու է գյուղի 2 թաղամասերն իրար կապող կամուրջը
- Վերանորոգվելու է գյուղապետարանի շենքը
- Ապահովվելու է „Ղալաշի„ քարի անվտանգությունը

Տավուշում

- Սալիկապատվելու և ասֆալտապատվելու են ներբնակավայրային ճանապարհները
- Վերանորոգվելու է ոռոգման համակարգը
- Վերակառուցվելու է փողոցային լուսավորության համակարգը
- Համալրվելու է գյուղատնտեսական տեխնիկան
- Վերանորոգվելու է գյուղապետարանի շենքը
- Վերանորոգվելու են թաղամասային աստիճանավանդակները

Նորաշենում

- Հարթեցվելու և խճապատվելու են ներբնակավայրային ճանապարհները
- Բարեկարգվելու են հանդամիջյան ճանապարհները
- Կառուցվելու է մանկապարտեզի նոր շենքը
- Վերանորոգվելու է գյուղը սնուցող խմելու ջրի 15 կմ հատվածը
- Կապիտալ վերանորոգվելու է „Սար„ ջրագիծը
- Համալրվելու է գյուղատնտեսական տեխնիկան
- Կապիտալ վերանորոգվելու է 1,5 կմ ոռոգման ջրատար

Նավորում

- Վերանորոգվելու է խմելու ջրի ցանցը, տեղադրվելու են ջրաչափեր
- Ավարտին է հասցվելու համայնքային կենտրոնի (մշակույթի տուն) շինարարությունը
- Ասֆալտապատվելու է գլխավոր ճանապարհի 1,5 կմ հատվածը
- Սալիկապատվելու է ներքնակավայրային ճանապարհների 3000 քմ հատվածը
- Կառուցվելու է հանդիսությունների սրահ
- 3 կմ-ով ավելացվելու է գիշերային լուսավորության ցանցը

Չինարիում

- Ոռոգման ջրագծի 500մ խողովակաշարը փոխարինվելու է նորով
- Կատարվելու է խմելու ջրի հորատում
- Կառուցվելու է պոմպակայան
- Իրականացվելու է ճանապարհների սալիկապատում և ասֆալտապատում
- Կառուցվելու է ցերեկային լուսավորության ցանց

Վերին Ծաղկավանում

- Հիմնանորոգվելու է համայնքային կենտրոնը
- Կառուցվելու են կոյուղագծեր և սելավատարներ
- Բարեկարգվելու և խճապատվելու է „Դալիգոաշ,, տանող ճանապարհը
- Սալիկապատվելու է ներքնակավայրային ճանապարհի 1 կմ հատվածը
- 2 կմ-ով ընդլայնվելու է փողոցային լուսավորության համակարգը

Ներքին Կարմիրաղբյուրում

- Կառուցվելու է գիշերային լուսավորության 2,8 կմ համակարգ
- Կառուցվելու է ջրահեռացման 1 կմ համակարգ
- Ներհամայնքային ճանապարհները սալիկապատվելու են

Չորաթանում

- Կառուցվելու է խմելու ջրագիծ
- Կառուցվելու է ոռոգման ներքին ցանց
- Հիմնանորոգվելու են ներքնակավայրային և հանդամիջյան ճանապարհները
- Հիմնանորոգվելու է մշակույթի տան դահլիճը
- Համալրվելու է գյուղատնտեսական տեխնիկան

Վարագավանում

- Ասֆալտապատվելու են ներհամայնքային ճանապարհները
- Կառուցվելու է ջրահեռացման համակարգը
- Հիմնանորոգվելու է խմելու ջրի ներհամայնքային ցանցը
- Կառուցվելու է „Վարագա ջուր,,գետի գետափնյա տարածքի գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգը
- Վերանորոգման միջոցով ավելացնելու ենք խմելու ջրի մատակարարումները

Չինչինում

- Ասֆալտապատվելու է բնակավայր մտնող ճանապարհի 10կմ հատվածը
- Գիշերային լուսավորությունն ընդլայնվելու է լեդ համակարգով
- Կառուցվելու է մանկական խաղահրապարակ
- Հիմնովին վերանորոգվելու է գյուղի կենտրոնական հուշարձանն ու տարածքը
- Բարեկարգվելու են 5 հուշաղբյուրներ
- Վերջնական լուծում է ստանալու ջրի մատակարարման խնդիրը

- Վերանորոգվելու է համայնքային կենտրոնն ուկառուցվելու են սանհանգույցներ

Այգեպարում

- Հիմնանորոգվելու է մշակույթի տունը
- Հիմնանորոգվելու է գյուղապետարանի շենքը
- Վերանորոգվելու է գյուղ մտնող ճանապարհի հենապատերը
- Վերանորոգվելու է և նոր գույքով համալրվելու է հացատունը
- Կառուցվելու է նոր պուրակ վարչական կենտրոնի բակում

Իծաքարում

- Սալիկապատվելու է ներբնակավայրային ճանապարհների 300մ հատվածը
- Վերանորոգվելու և կահավորվելու է հանդիսությունների սրահը
- Կառուցվելու է 100 մ երկարությամբ հենապատ
- Կառուցվելու է կոյուղագիծ

3.1.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքի վարչական տարածքում չկան աղակալած, հողմնահարված, հողատարած, ճահճացած, ողողված հողեր: Համայնքում աշխատում է <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի Արծվաբերդի մասնաճյուղը, որը բնապահպանական կազմակերպություն է, ունի 92 աշխատող, որից 23-ը կին են: Համայնքն առկա է 17693,14 հա արոտավայր: Համայնքի տարածքում և համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող արոտավայրերի /ենթալայան գոտի/ արդյունավետ օգտագործումը նպաստում է էկոլոգիապես մաքուր անասնապահական մթերքների արտադրության աճին: Հեռագնա արոտավայրերում կան անասունների ջրման 15 կետեր, որոնք գտնվում են սանիտարական բավարար վիճակում: Համայնքում աղբահանությունն իրականացվում է 3 աղբատար կամազի, ԳԱԶ-53 ինքնաթափի, ՄՏԶ բելառուս տրակտորի և ԶԻԼ-433362 միջոցով: Համայնքում տարեկան գոյանում է 1766,2 տ կամ մոտ 39250մ³ կոշտ կենցաղային թափոն: Նախապես կազմված գրաֆիկի համաձայն համայնքում կատարվում է աղբահանություն: Բերդ համայնքի կանաչապատ տարածքը կազմում է 40989,33 հա: Զգացվում է կանաչապատ տարածքները խնամելու և պահպանելու անհրաժեշտություն:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Կանաչապատ տարածքների խնամք և պահպանություն:
- Զրահեռացման համակարգի բարեկարգում, սելավատարների կառուցում:
- Կոյուղու ներքին ցանցի հիմնովին նորոգում Բերդ քաղաքի Խաչատրյան, Նալբանդյան, Սասունցի Դավիթ, Թումանյան, Դավիթ Անհաղթ, Սահյան, Սարյան փողոցներում:
- Ոռոգման ցանցի իրականացում 120 հեկտար հողերի ոռոգման համար:
- Գերեզմանատների տարածքների բարեկարգում:
- Ունիվերսալ կոմունալ մեքենասարքավորման ձեռք բերում

3.1.3 Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը հացահատիկային մշակաբույսերի մշակությունն է: Բերդ համայնքի վարչական տարածքը՝ 78528.27 հեկտար է. այդ թվում՝ համայնքային սեփականության հողերը կազմում են 14288.32 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 31622.96 հեկտար, արտադրական նշանակության հողեր՝ 217.71 հեկտար, բնակարանային ֆոնդի հողեր՝ 2469.0 հեկտար, հանգստի գոտիներ՝ 62.17 հեկտար, պետական սեփականության հողերը՝ 54799.51 հա, ընտանիքների կողմից սեփականաշնորհմանը մասնակցած՝ 1487, մեկ հողաբաժնի չափը 0.13/1.4 հա: Բարեխառն կլիման, լեռնաանտառային և լեռնամարգագետնային գոտիները բարենպաստ պայմաններ են ստեղծում խոշոր և մանր եղջերավոր անասնապահության, ինչպես նաև խոզաբուծության զարգացման համար: Խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը 10129 է: Համայնքում արտադրվում է կաթ, միս, բուրդ, ձու և մեղր: Վերջին տարիներին աճել է բնակչության հետաքրքրությունը մեղվաբուծության և թռչնաբուծության նկատմամբ: Ներկայումս համայնքում հաշվվում է 4742 մեղվաբնտանիք և 54327 ընտանի թռչուն: Համայնքի տարածքում հողատարածքները հարմար են հացահատիկային և շարահերկ կուլտուրաների մշակության, խաղողագործության և պտղաբուծության համար: 2022թ. համայնքում արտադրվել է 5855.2 տոննա խաղող, 217.7 տ կարտոֆիլ, 4300.3 տ հացահատիկ, 193.9 տ հատիկընդեղեն և 2776.5 տ պտուղ, հատապտուղ:

Հիմնախնդիրներ

- Կանոնակարգել հողերի ընթացիկ հաշվառման և ամենամյա հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ:
- Իրականացնել հողերի ընթացիկ հաշվառում:
- Վերահսկողություն իրականացնել համայնքային գույքի պահպանման և օգտագործման գործընթացի վրա:
- Վերահսկողություն սահմանել գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման համար

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Նոր գյուղտեխնիկայի ձեռքբերում:
- Խաղողի այգիների ընդլայնում և նոր տնկիների տեղադրում:
- Նոր սորտի սերմացու/կարտոֆիլ, հացահատիկ, եգիպտացորեն/ ձեռքբերում և անմշակ հողատարածքների մշակում:
- Մաքրման և կաթնամթերքների ընդունման կետերի ստեղծում:
- Ոռոգման ցանցի արդիականացում:
- Հարմարավետ շուկայի կառուցում գյուղացու բերքը իրացնելու նպատակով:

3.1.4 Արտաքին լուսավորություն

Բերդ համայնքում գործում է շուրջ 200 կմ արտաքին լուսավորության համակարգ, 2022 թվականին լուսավորվել են Բերդ համայնքի Պառավաքար, Մովսես, Այգեձոր, Չինարի, Չորաթան և Այգեպար բնակավայրերի փողոցները՝ մոտ 40 կմ:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում :
- Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգոխնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:
- Վերակառուցվելու է Բերդ-Տավուշ լուսավորության համակարգը:
- Բերդ համայնքի բոլոր բնակավայրերում կկառուցվի 25 կմ նոր լուսավորության համակարգ:

3.1.5 Տրանսպորտ և ճանապարհային տնտեսություն

Բերդ համայնքով անցնում է հանրապետական նշանակության Հ-36 Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար 67.5կմ երկարությամբ ճանապարհը: Հանրապետական նշանակության մեկ այլ Այգեհովիտ-Պառավաքար-Այգեպար Հ-37 ճանապարհը կազմում է Հ-36-ի շարունակությունը: Համայնքի կառուցապատման ուրվագիծը խառնիճաղանջ է: Համայնքի միջբնակավայրային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են, իսկ ներբնակավայրային ճանապարհները հիմնականում ենթակա են բարեկարգման: Համայնքում ունենք տուֆով և բազալտով սալիկապատված փողոցներ: Համայնքային ենթակայության կամուրջները 8-ն են, որից 1-ը կիսակառույց է, 1-ը՝ վթարային: Համայնքի տարածքում տեղակայված են ճանապարհային երթևեկության նշաններ, 2 խաչմերուկներում՝ լուսացույցեր: Համայնքի տարածքում գործում են 1 տաքսի ծառայություն: Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Բերդ համայնքի փողոցների կապիտալ վերանորոգում, հիմնանորոգում, բարեկարգում:
- Փողոցների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
- Համայնքի ծանրաբեռնված փողոցների թեթևացում:
- Տավուշ գետի անավարտ կամրջի շինարարություն:
- Տավուշ գետի /գործող/ կամրջի վերանորոգում:
- Համայնքի փողոցների հենապատերի վերականգնում:
- Համայնքի փողոցների մայթերի բարեկարգում և սալիկապատում:
- Համայնքի դաշտամիջային ճանապարհների բարեկարգում:
- Տուֆով և բազալտով ճանապարհների վերանորոգում:
- Հարմարավետ թեքահարթակներով կանգառների կառուցում:

3.1.6 Կրթության, Մշակույթի, Սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Բերդ համայնքում գործում են 5 հիմնական դպրոցներ, 15 միջնակարգ, 1 ավագ դպրոց, և 1 քոլեջ: Դպրոցների շենքերը ջեռուցվում են: Վերջին տարիներին հարստացվել է դպրոցների գույքային բազան: Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է 17 մանկապարտեզների միջոցով: Համայնքի երաժշտական դպրոցը տեղավորված է նորակառույց տիպային շենքում: Դպրոցում գործում են դաշնամուրի, քանոնի, ջվիի, դիոլի, ջութակի և ձայնի մշակման բաժիններ: Մշակույթի տանը գործում են պարի, երգի, մանկական թատերական խմբակներ: Մշակույթի տան նյութատեխնիկական բազան աղքատ է: Համայնքային գրադարանում կա 75000 կտոր գիրք: Գրադարանի գրքային ֆոնդը վերջին տարիներին հարստացել է մշակույթի նախարարությունից, մարզային գրադարանից ստացված գրքերով և անհատական նվիրատվություններով: Քաղաքի մարզադպրոց են հաճախում 298 պատանիներ և աղջիկներ, որոնք մարզվում են բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, ըմբշամարտի, ֆուտբոլի, <<Ու-Շու>>-ի խմբակներում: Մարզադպրոցը սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն է: Դպրոցի նյութատեխնիկական բազան բավարար է: Համայնքի արվեստի դպրոցում գործում են գունանկարի, գծանկարի, կոմպոզիցիայի, քանդակագործության և ասեղնագործության բաժիններ:

Համայնքում առկա են տեղական ինքնակառավարմանը հասարակության մասնակցությունն ապահովող քաղաքական և հասարակական կառույցներ, կուսակցությունների տարածքային

կազմակերպություններ՝ իրենց երիտասարդական խմբերով և այլ հասարակական կազմակերպություններ:

Հիմնախնդիրներ

- Բնակչության մեջ արմատավորված չէ ֆիզիկական կուլտուրան և առողջ ապրելակերպը:
- Բարելավել մշակույթի և սպորտի օջախների նյութատեխնիկական բազան, նպաստել մշակույթի և սպորտի զարգացմանը:
- Ստեղծել բավարար պայմաններ երեխաների, երիտասարդների և համայնքի բնակչության ֆիզիկական դաստիարակության համար:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Գնել Մեջլումյանի անվան մարզադպրոցի համար մարզական գույքի ձեռքբերում:
- Գնել Մեջլումյանի անվան մարզադպրոցի և Ժիրայր Անանյանի անվան մշակույթի տան շենքերի ջեռուցման համակարգի իրականացում և վերանորոգում:
- Ֆուտբոլի մարզադաշտերի կառուցում:
- Համայնքային սպորտային – առողջարանային կենտրոնի ստեղծում
- Տարեցների համար Ժամանցի կազմակերպման ծրագրերի իրականացում

3.1.7 Առևտուր և սպասարկում

Բերդ համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների

ընդհանուր թիվը կազմում է 301, այդ թվում հասարակական սննդի առևտրի սրահներ- 277
բենզինի լցակայան – 8
գազի լիցքավորման կետեր – 4
հանրային սննդի օբյեկտներ – 9
գյուղատնտեսական արտադրանքի շուկա – 0
գյուղատնտեսական վերամշակման շուկա-3

Հիմնախնդիրներ

- Բավարար հսկողություն չի իրականացվում վաճառվող ապրանքների որակի, ժամկետանց ու խոտան ապրանքների վաճառքի արգելման ուղղությամբ:
- Չկա հսկողություն կենցաղային ծառայությունների ոլորտում:
- Կանոնակարգված չէ բացօթյա առևտուրը, բացօթյա հանրային սննդի և բացօթյա կենցաղային ծառայությունների գործունեությունը, շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառքը, ձմերուկի, սելիի, գործարանային փաթեթավորմամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի բացօթյա վաճառքը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում, այդ թվում՝ առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտում գործունեության լրացուցիչ կանոնների և պայմանների մշակում:
- Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:
- Համայնքի տարբեր մասերում գյուղատնտեսական մթերքների նոր շուկաների կազմակերպում:
- Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրի և կենդանի անասունների շուկաների կազմակերպում:

- Բացօթյա ապօրինի առևտրի արգելում:

3.1.8 Արտաքին կապեր և տուրիզմ

Նախատեսվում է ընդլայնել քույր և գործընկեր քաղաքների ցանկը, որոնց հետ համագործակցության գերակա ուղղությունները լինելու են տուրիզմի զարգացումը և համատեղ ձեռնարարկատիրական ծրագրերը: Անհրաժեշտ է մշակել ծրագրեր նոր գործընկերներ գտնելու և արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու համար՝ հատկապես Բերդ համայնքի ներդրումային դաշտն ընդլայնելու և նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

Հիմնախնդիրներ

- Դոնոր կազմակերպությունների մոտ Բերդ համայնքի նկատմամբ հետաքրքրության բացակայություն:
- Արտաքին ներդրողների համար նպաստավոր պայմանների բացակայություն:
- Տեղեկատվության ոչ բավարար ապահովում:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Բերդ համայնքի պատմությանը, մշակույթին և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացում:
- Բերդ համայնքում սեմինարների, կլոր սեղանների և այլ ձևաչափերի հանդիպումների կազմակերպում և անցկացում:
- Բերդ համայնքում օտարերկրյա ներդրումների ներգրավում:
- Բերդ համայնքում պատմամշակութային վայրերը տեղորոշող ցուցանակների տեղադրում:
- Բերդ համայնքում ամենամյա կազմակերպվող փառատոնների կազմակերպում

3.1.9 Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, որը ունի նորովի վերանորոգված պոլիկլինիկական և ինֆեկցիոն մասնաշենքերը: Այն հազեցած է նորագույն տեխնիկայով, ունի ախտորոշիչ ծառայությունների և ինտենսիվ թերապիայի բաժանմունք: Համայնքում գործում են նաև 1 հոսպիտալ, մասնագիտացված արտահիվանդանոցային բժշկական 1 ախտորոշիչ կենտրոն, ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող 10 կենտրոն, և թվով 11 դեղատներ, և Այգեձոր, Արծվաբերդ, Մովսես, Ն. Կ. Աղբյուր, Պառավաքար, Նավուր բնակավայրերում գործում են առողջության առաջնային պահպանման կենտրոններ:

3.2 Հանրապետական և մարզային ծրագրեր

Քաղաքաշինության ոլորտում

Քաղաքաշինական ոլորտում թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի ամբողջական գործարկումը: 2023-2027 թվականների ընթացքում հանրապետության բնակավայրերին գլխավոր հատակագծերով ապահովելու խնդրի ամբողջական լուծումը:

Սպորտի և երիտասարդության ոլորտում

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում երիտասարդական ծրագրերի էական ավելացում մարզերում, ինչպես նաև երիտասարդության հիմնախնդիրների լուծման գործընթացներում մարզային երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում: Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման աջակցության նպատակով համայնքի կողմից ներդրումային ֆոնդի ձևավորում՝ հետագայում համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ

3.3 Միջհամանքային ծրագրեր

Երևան քաղաքի վարչական շրջանների, ինչպես նաև հարակից համայնքների հետ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

